ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան, Տերյան փող., 44, հեռ՝ (+374 11) 518 401,
էլ. փոստ՝ kentron@yerevan.am

«12» 02 2021թ.

№ 120-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության առաջատար մասնագետ Հ.Մարգարյանի կողմից 11.12.2020թ. կազմված թիվ 036901 վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության հիման վրա հարուցված վարչական վարույթում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու համար նյութերը նախապատրաստող հանձնաժողովը /այսուհետ՝ Հանձնաժողով/, 22.02.2021թ. տեղի ունեցած նիստի ընթացքում քննեց 11.12.2020թ. կազմված թիվ 036901 արձանագրության մեջ նշված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը, որի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Արտաշես Հակոբյանի կողմից Երևանի Տ.Մեծի պողոտա 43 թիվ 25 հասցեի դիմաց իրականացվել է ոչ սահմանված տեղերում առևտուր:

Գործի քննության ընթացքում Հանձնաժողովը, էական փաստական և իրավաբանական հանգամանքների հետազոտման արդյունքում, պարզեց, որ անհատ ձեռնարկատեր Արտաշես Հակոբյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 162-րդ հոդվածի 1-ին մասով /ոչ սահմանված տեղերում առևտուր անելը/ նախատեսված վարչական իրավախախտումը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքները և գործի քննության ընթացքում պարզված հանգամանքները, ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի երկրորդ կետով, 162-րդ հոդվածի 1-ին մասով, 219.1-րդ և 281-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 07.05.2010թ. «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ

պատվիրակելու մասին» թիվ 96-Ն որոշմամբ, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Արտաշես Հակոբյանին Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

2. Առաջարկել անհատ ձեռնարկատեր Արտաշես Հակոբյանին միջոցներ ձեռնարկել իրավախախտման պատճառները և պայմանները վերացնելու ուղղությամբ և Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ վարչական տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ վճարում կատարելով կենտրոնական գանձապետարանի 900015213110 հաշվեհամարին: Օրենքով սահմանված ժամկետում տույժը չվճարելու դեպքում այն կարող է բռնագանձվել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

3. Կայացված որոշումը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով կուղարկվի անհատ ձեռնարկատեր Արտաշես Հակոբյանին:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական /ՀՀ վարչական դատարան/ կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ԱՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ